Հաստատված է՝»
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեագիտության ամբիոնի 31.08.2020թ-ի նիստում, արձանագրություն թիվ 1
ամբիոնի պետ, ոստիկանության գնդապետ Մ.Սեմերջյան

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ		Փորձագիտական ոլորտի դատաիրավական կարգավորումը
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ		
ՖԱԿՈՒԼՏԵՏ		Մագիստրատուրա, հեռակա ուսուցում
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ		Օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեագիտության ամբիոն E-mail: OHGKRIM@mail.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ		Ա. Ասլանյան /իրավ. գիտ. թեկնածու/ Հեռախոս /094/ 57-74-01
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ		1-ին կուրս, 2-րդ կիսամյակ
ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ		մագիստրոս

ԿՐԵԴԻՏՆԵՐ		
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱԽԱՏԱՆՔՆԵՐ		«Փորձագիտական ոլորտի դատաիրավական կարգավորումը» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 38 ժամ, որից 6 ժամ դասախոսություն, 32 ժամ ինքնուրույն աշխատանք: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, լրացնում է ձևաթղթեր, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը մեկ անգամ՝ 80 րոպե տևողությամբ:
ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ		Դասընթացը կառուցվում է «Քրեական իրավունք», «Քրեական դատավարություն», «Կրիմինալիստիկա» դասընթացների իմացության վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ **ՆՊԱՏԱԿ**		«Փորձագիտական ոլորտի դատաիրավական կարգավորումը» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են փորձագիտական ոլորտի դատաիրավական կարգավորման առանձնահատկությունները, բովանդակությունը, դատական փորձաքննությունների հիմնական տեսակները, փորձագիտական ոլորտը կարգավորող իրավական ակտերը: Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ՝ փորձագիտական ոլորտը կարգավորող դատաիրա-

ԽՆԴԻՐ/ՆԵՐ		վական կարգավորումների բովանդակության, դատական փորձաքննությունների հիմնական տեսակների, դատական փորձաքննությունների կատարման արդյունքում լուծվող հարցերի և դատափորձագիտական պրակտիկայում հանդիպող գործնական բնույթի տարաբնույթ մոտեցումների վերաբերյալ: Դասընթացի խնդիրներն են՝ 1) ներկայացնել դատափորձագիտական ոլորտի իրավական կարգավորումների բովանդակությունը, 2) ներկայացնել դատափորձագիտական ոլորտի կառուցվածքը ՀՀ-ում, 3) ներկայացնել դատական փորձաքննությունների հիմնական տեսակները, 4) ներկայացնել փորձագիտական ոլորտը կարգավորող իրավական ակտերը, 5) ներկայացնել դատական փորձաքննությունների ընթացքում լուծվող հարցերի հնարավոր շրջանակը, 6) ներկայացնել դատափորձագիտական պրակտիկայում առկա տարաբնույթ հարցերի վերաբերյալ առկա գործնական մոտեցումները, 7) ներկայացնել դատափորձագիտական ոլորտին վերաբերող ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները, ինչպես նաև փորձագետի եզրակացության գնահատման և ապացուցողական նշանակությանը վերաբերող դիրքորոշումները:
ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ***Կարողանա՝***		1) ստացված գիտելիքները կիրառել պրակտիկ գործունեության բնագավառում, 2) կատարել տվյալ բնագավառին վերաբերող ինքնուրույն վերլուծություն և հետազոտություն՝ ընդհուպ գիտական նորույթի աստիճանի:
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական		1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն /06.12.2015թ./: 2. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք /18.04.2003թ../: 3. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք /07.03.1961թ., սկզբնաղբյուրը՝ ՀՍՍՀԳՍՏ 1961/7, ուժը կորցրել է 01.08.03 թվականից՝ 18.04.03 ՀՕ-529-Ն օրենք/: 4. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք /01.07.1998թ./: 5. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք /05.05.1998թ./: 6. Հայաստանի Հանրապետությա քաղաքացիական դատավարության օրենսգիրք /09.02.2018թ./: 7. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրք /05.12.2013թ./: 8. Հայաստանի Հանրապետության օրենքը «Ոստիկանության մասին» /16.04.2001թ./: 9. Հայաստանի Հանրապետության օրենքը «Զենքի մասին» /03.07.1998թ./: 10. Հայաստանի Հանրապետության օրենքը «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» /26.12.2002թ./: 11. Հայաստանի Հանրապետության օրենքը «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» /24.10.2005թ./: 12. «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-226-Ն օրենքը՝ ընդունված 2017 թվականի դեկտեմբերի 6-ին: 13. «Հանրապետական գնդակապարկուճային հաշվառման քարտադարանի

		կազմակերպման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 06.12.2000թ. թիվ 812 որոշումը: 14. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում մատնադրոշմային քարտադարանի կազմակերպման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 27 մարտի 2014 թվականի N 332-Ն որոշումը: 15. ՀՀ առողջապահության նախարարության «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» պետական հիմնարկը վերակազմակերպելու մասին» ՀՀ կառավարության 15.08.2002թ. թիվ 1242-Ն որոշումը: 16. «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության փորձագիտական կենտրոն» պետական հիմնարկը «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի նոյեմբերի 26-ի №744 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 28.11.2002թ. թիվ 1933-Ն որոշումը: 17. «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու եվ նրա կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 22.07.2004թ. թիվ 1127-Ն որոշումը: 18. «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարությունը 2019թ.-ի հոկտեմբերի 10-ի թիվ 1441-Լ որոշումը: 19. «Մշակութային արժեքների արվեստաբանական և մշակութաբանական փորձաքննության անցկացման կարգը և չափորոշիչները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 12.05.2005թ. թիվ 630-Ն որոշումը: 20. «Քրեական գործերով իրեղեն ապացույցների, առգրավված արժեքների և այլ առարկաների ու փաստաթղթերի հաշվառման, պահպանման, տնօրինման կարգը հաստատելու մասին» ՀՀ գլխավոր դատախազի, ՀՀ ՆԳ նախարարի, ՀՀ ԱԱ նախարարի, ՀՀ ՊԵ նախարարի, ՀՀ դատարանների նախագահների խորհրդի նախագահի, ՀՀ ԿԱ մաքսային ՊԿ նախագահի 02.08.2002թ. թիվ, թիվ 18, 324, 35/02, 993, Բ 159, 02/56-Ն համատեղ հրամանը: 21. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Արտեմ Արմենի Հարությունյանի վերաբերյալ գործով, 2016 թ. նոյեմբերի 1-ի ՍԴ3/0226/01/14 որոշումը: 22. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Սիրակ Շավարշի Սաքանյանի վերաբերյալ գործով, 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0058/01/10 որոշումը: 23. ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Արարատ Ավագի Ավագյանի և Վահան Սերյոժայի Սահակյանի վերաբերյալ գործով, 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշումը: 24. ***Ալեքսանյան Մ.Ս.*** Փորձաքննությունը քրեական դատավարու-թյունում /Փորձաքննություն նշանակելը և կատարելը, հետազոտման համար նմուշներ ստանալը/. Երևան: Միվա-Պրեսս, 2009: 25. ***Ենգիբարյան Վ. Գ. Հովսեփյան Ա. Ն.,*** Դատական փորձաքնությունների տեսական և գործնական արդի հիմնախնդիրները / Վ. Գ. Ենգիբարյան, Ա. Ն. Հովսեփյան.- Եր.: ՀՀ արդարադատության ակադեմիա, 2020: 26. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, ընդհանուր մաս: Դասագիրք բուհերի համար: Հեղինակային խմբի ղեկավար և խմբագիր ***Գ.Ս. Ղազինյան***: Երևան, 4-րդ հրատ. փոփոխ. և լրաց., ԵՊՀ հրատ., 2006: 27. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս, խմբ.՝ իրավ. գիտ. դոկ., պրոֆ. ***Գ.Ս. Ղազինյանի***, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2004:

		28. Փորձաքննությունը քաղաքացիական գործերով դատական վարույթի շրջանակներում: Ուսումնական ձեռնարկ/ Հեղ. խումբ: Գիտ. խմբ. ***Ա. Եզեկյան*** – Եր.: ՀՀ ԳԱԱ փորձաքննությունների ազգային բյուրո, 2014: 29. Փորձաքննությունների արդի վիճակը Հայաստանում – Եր.: Հեղինակային հրատարակություն, 2005: 30. ***Օհանյան Լ. Պ.*** Կրիմինալիստիկա (տեխնիկա)/ԵՊՀ.- ԵՐ., Երևանի համալս. հրատ., 1993: 31. «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի էլեկտրոնային կայք էջը՝ ծանոթանալով սույն կենտրոնում իրականացվող փորձաքննությունների և դրա արդյունքում լուծվող հարցերի հնարավոր շրջանակին - http://justexpert.am/hy 32. «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի էլեկտրոնային կայք էջը՝ ծանոթանալով նշված հաստատությունում իրականացվող փորձաքննությունների և դրա արդյունքում լուծվող հարցերի հնարավոր շրջանակին - http://conf.nbe.am/hy/ 33. ***Челышева О.В., Сотников К.И., Кузбагарова Е.В.*** Криминалистика. 2017. 34. ***Аверьянова Т.В., Белкин Р.С., Корухов Ю.Г., Россинская Е.Р.*** Криминалистика, учебник для вузов, издательство НОРМА-ИНФРА М, М., 1999. 35. ***Аверьянова Т. В.*** Судебная экспертиза. Курс общей теории : монография / Т. В. Аверьянова. –М.: Норма: ИНФРА-М, 2015. 36. ***Российская Е. Р., Галяшина Е. И.*** Настольная книга судьи: судебная экспертиза. — Москва: Проспект, 2010. 37. Комментарий к Уголовному кодексу Российской Федераций. Расширенный уголовно-правовой анализ с материалами судебно-следственной практики /Под общ. ред. ***В. В. Мозякова***/, ЭКЗАМЕН, М., 2002. 38. Комментарий к Уголовному кодексу Российской Федерации /Под общ. ред. док. юрид. наук, Председателя Верховного Суда РФ ***В. М. Лебедева*** и док. юрид. наук, проф. ***Ю И. Скуратова.*** – 4-е изд., перераб. и доп.-М.: Издательство НОРМА, 2002. 39. ***Челышева, О. В.*** Назначение и производство судебных экспертиз : учебное пособие / О. В. Челышева. — СПб. : Санкт-Петербургский юридический институт (филиал) Академии Генеральной прокуратуры Российской Федерации, 2010. 40. Федеральным закон "О государственной судебно-экспертной деятельности в Российской Федерации" от 31 мая 2001г. 41. "Уголовно-процессуальный кодекс Российской Федерации" от 18.12.2001 N 174-ФЗ (ред. от 24.04.2020).
Լրացուցիչ		1) ***Ավագյան Ա.Բ., Հովսեփյան Ա.Գ., Պետրոսյան Տ.Ռ.*** «Ռուս-հայերեն քրեագիտական համառոտ բառարան», Եր., «Այբ-Քե», 1993: 2) ***Ավագյան Ն. Մ., Նազարեթյան Կ. Լ., Թորոսյան Ա. Ս.*** Դատական բժշկության դասընթաց: «ԼՈՒՅՍ» հրատարակչություն, Երևան, 1978թ.: 3) Абрамов С.С., Кутузов. А.Д., Сонис. М.А., Криминалистическое исследование холодного оружия. Москва 2011. 4) Судебно-почерковедческая экспертиза- Обшая часть. Под ред. Орловой В.Ф., Москва 2011. 5) Судебно-почерковедческая экспертиза- Особенная часть. Под ред. Орловой В.Ф., Москва 2011. 6) Беляева Л.Д., Ольхова И.Я. Итоги обобщения экспертной практики криминалистического исследования лакокрасочных материалов и покрытий. М., 2003. 7) Горбачева И.В. Судебно-баллистическая экспертиза // Современные возможности судебной экспертизы. М., 2000. 8) Транспортно-трасологическая экспертиза по делам о дорожно-

		транспортных проишествий. Под ред. В.П. М., 1980. 9) ***Зотов Д. В.*** Правовая экспертиза в уголовном судопроизводстве: от легализации к процессуальной регламентации / Д. В. Зотов. – Воронеж : Издательский дом ВГУ, 2015. 10) ***Белкин А. Р.*** Теория доказывания. Научно-методическое пособие. — М.: Издательство НОРМА, 1999.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ ԵՎ ԿՇԻՌ		Ընթացիկ ստուգման ձևը ստուգարք	
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ		Գնահատման արդյունարար միավոր	Գնահատականը տառանշումով
			ստուգված
			չստուգված
			չներկայացած
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ		Դասընթացի ընթացքում սովորողների գիտելիքներն ու ունակությունները գնահատվում են 20 բալանոց համակարգով: Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված»: Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝ ա) «Գերազանց», եթե ունկնդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով. բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների. գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները. դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:	
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ներկայություն		Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի սովորողին:	
		Սովորողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկընդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Սովորողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:	

Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ		Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:
Ինքնուրույն և գործնական աշխատանքներ		Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:

ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՄԱՆ ՔԱՐՏԵԶ

Թեմա 1 **Հայաստանի Հանրապետությունում փորձագիտական ոլորտի կառուցվածքը և կարողությունները** **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Հայաստանի Հանրապետությունում գործող հիմնական փորձագիտական կառույցները: Փորձագիտական կառույցների գործունեության նպատակները և գործառույթները: 2) Փորձագիտական կարողությունները և հիմնական խնդիրները: 3) Փորձագիտության ոլորտում իրավական, գիտագործնական միջազգային համագործակցության ներկայիս մակարդակը և հնարավորությունները՝ Հայաստանի Հանրապետությունում տվյալ ոլորտը կարգավորող իրավական դաշտի կատարելագործման առումով: 4) Փորձաքննությունների նշանակման և կատարման իրավական հիմքերը՝ ըստ ՀՀ քրական, քաղաքացիական և վարչական դատավարության օրենսդրությունների: 5) Գիտական և գիտատեխնիկական փորձաքննությունների նշանակման և կատարման առանձնահատկությունները:	Հարցեր 1-3 անցկացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 4-5 ինքնուրույն աշխատանք:

Թեմա 2 **Դատական փորձաքննությունների կատարման իրավական հիմքերը և տեսակները** **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Փորձագետի եզրակացությունը: Փորձագետի եզրակացության հանդեպ ներկայացվող պահանջները: Փորձագետի ցուցմունքը, փորձագետի եզրակացության ապացուցողական դերը: 2) Հատուկ գիտելիքները՝ որպես դատական փորձաքննության իրականացման հիմնական սկզբնաղբյուր: 3) Փորձագետը՝ որպես դատական փորձաքննության սուբյեկտ: 4) Փորձաքննության կատարումը փորձագիտական հիմնարկում և նրանից դուրս: Փորձաքննության նշանակումը և կատարումը դատական քննության ընթացքում: 5) Հիմնական և լրացուցիչ փորձաքննությունները: Առաջնային և կրկնակի փորձաքննությունները: 6) Միանձնյա, հանձնաժողովային, համալիր, լրացուցիչ և կրկնակի փորձաքննությունների նշանակման և կատարման առանձնահատկությունները:	Հարցեր 1-3 անցկացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 4-6 ինքնուրույն աշխատանք:

Թեմա 3 **Փորձագետի եզրակացության ապացուցողական նշանակությունը** **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Ներքին համոզմունքը՝ որպես փորձագիտական եզրակացության գնահատման դատավարական չափանիշ: 2) Փորձագետի եզրակացության գնահատման որոշակի առանձնահատկությունները: 3) Դատական փորձաքննություններում հանդիպող սխալները և պատճառները: 4) Դատական փորձագետի անկախությունը: 5) Դատական փորձաքննությունների իրականացման ներկա վի-	Հարցեր 1-5 անցկացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարց 6-7 ինքնուրույն աշխատանք:

ճակը, առկա մարտահրավերները: 6) Փորձագետի եզրակացության ապացուցողական նշանակությունն ու իրավական գնահատումը՝ ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների: 7) Փորձագետի կողմից ակնհայտ կեղծ եզրակացություն տալը:	